№ XII **ՅՈՒՅՍ** 1887

ԵՐԿՐՈՐԴ ԹԱՓԻՆ

ՏՐՈՒԱՅ ՎԵՐՋԻՆ

Այս 1887 թուականի վերջին № 12 Դեկտեմբերի համարը լոյս ընծայելով՝ կարևորութիւն չենք դիտում երկար ու բարակ խօսք բանալ մեր ընթերցողների հետ «Աղբիւրի» Հինգամեայ կեանքի մասին կամ նրա մօտակայ նոր՝ վեցերորդ շրջանի վերաբերութեամբ: Տարիներով աշխատելով բուռն եռանդով, մենք՝ թոյլ ենք տալիս մեզ այսպէս ասել՝ հասկացրինք հայ հասարակութեան մանկական ամսագիր ունենալու անհրաժեշտ պէտքը. հրատարակելով այդ օրինակ մի ամսագիր՝ ամեն ջանք գործ դրինք դրան աւելի և աւելի տարածելու հայերի մէջ և անխոնջ կերպով աշխատեցինք այդ ամսագիրը քայլ առ քայլ անզգալապէս կերպով կատարելագործելու՝ բովանդակութեան և արտաքին շքեղութեան կողմից:

Մենք այն բախտաւոր խմբագիրներից չենք, որ մեր ձեռնարկած հրատարակութիւնը այնպիսի տարածման և ծաւալի հասած լինէր, որ մենք նրան դարձնէինք մեր գլխաւոր գործը և զբաղմունքը.

այդ այդպէս չըլլնելով՝ մենք պարտաւոր ենք մեր անձնական և ընտանեկան գործերը վարելու ժամանակից մնան հանել և «Աղբիւրի» համար, և մեզ բախտաւոր ենք համարում, որ մեզ էս վճռակատեցաւ ձեռնթափ չըմնալ հասարակութեան գործում: Ոտնատակ անելով ամեն դժուարութիւնները, որը մեր սովորութիւնում չկայ պարզել ընթերցողների առաջ, մենք այն դիրքին հասցրինք գործը, որ շատերին նա հեշտ կատարելի մի գործ է թւում: «Աղբիւրը» հետզհետէ ամրանդում է իրան համար հաստատ և խոր հիմք հայ մանուկների սրտում: Իրաւամբ, որովհետև գործի ձեռներէցը մենք էինք, սկզբում մեզանից աւելի կըպահանջուէր զոհողութիւն. բայց այժմ, երբ մեզ ոգևորող գործի գաղափարն արդէն մարմնացած՝ ոգևորում է և խանդ է տալիս շատերին և արդէն գործնական շատի մէջ մտած՝ յաջողութեամբ յառաջ է գնում, մենք իրաւունք ունինք կարծելու, որ այժմ մենք մենակ չենք, որ այժմ հազարաւոր սրտեր բաբախում են, հազարաւոր գլուխներ մտածում են նոյն գաղափարի իրագործման համար: Եթէ սրա մէջ էլ չենք սխալվում, ապա ուրեմն վստահ կարող ենք ակն ունել, որ յառաջիկայ տարին մեր ընթերցողների թիւը կըկըրկնապատկուի, մեր աշխատակիցների թիւը կըստուարանայ և մեր ձեռնարկած գործը աւելի կըճո-

խանայ և կրկատարելագործուի։ Այսպիսի խորհրդածութիւնով փակելով «Աղբիւրի» հինգերորդ տարեշրջանը, հարատաւ իղձերով և լի յուսով մեր աչքերը դարձնում ենք դէպի նրա վեցերորդ տարեշրջանը, որի մէջ ոտ կրկնենք 1888 թուականի նոր տարում։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզուի քերականութեան տարերքը. առաջին մասը. երրորդ եւ հոգով երկրորդ տարրական ուսուցման նիւթ. աշխատասիրեց Նահապետ Տէր-Ղևոնդեան. երկրորդ բաբեփոխուած տպագրութիւն. Հրատարակութիւն Կենդրոնական Դպրաձառանոցի. Թիֆլիս. տպարան Մ. Ոսկանեանցի, 1888. գինն է 30 կոպ.

Այս վերնագրի մէջ նշտրերը՝ և հոգով, բաբեփոխուած, եւ թուականը 1888. (որ հետ տարի պիտի լինի) նոյնութեամբ ենք դրել։

Սոյն այս քերականութիւնը մի յառաջաբան ունի երկու երեսից բազկացած, որի մէջ ասուած է, որ «Սոյն հրատարակութիւնը երրորդ տարրական ուսմունքն է»։ «Մասամբ երկրորդ տարրական» ասածի մասին ոչինչ ակնարկութիւն չկայ յառաջաբանում և ոչ էլ ցոյց է տուել թէ ինչպէս և ինչն է բարեփոխել։ Յառաջաբանն ասում է, որ «քերական» և «քերականութիւն» մի և նոյն բանն է. թէ՝ քերականութիւնը այբբենարանի հարազատ եղբայրն է։ Եթէ մեր նախնիք, ասում է, մի մեծաւոր կապ են գտել քերականի և քերականութեան մէջ, որ երկուսին էլ մի և նոյն անունն են տուել մեզանից տասնըվինգ դար առաջ, մեզ անհերքելի է այդ կապը չըգանել և չըհասկանալ այժմ, որ այբբենարանի հետ պէտք է սովորեցնել և քերականութիւն։ Սրանով արդէն պարզվում է մասամբի մետքը։ Բայց մինչ հարկ կար մասամբ դնել և այն էլ վախվխելով՝ նաեւ, կարելի էր ուղղակի ասել՝ «սկսած առաջին տարուանից». չէ որ քերական և քերականութիւն երկուորեակներ են . . . Այս նշանաւոր յառաջաբանը վերջանում է հետևեալ նշանաւոր տողերով.

« ի մարդ՝ որքան որ աշխատէր, մշակուած ապրիւրներ չունենալով աչքի առաջ, րան անայնի (?) կատարեալ եւ պակասութիւններից զերծ գործ չէր կարող

յառաջացնել։ Թող մեր պարոն ուսուցիչները՝ փոխանակ չարաչնորհ ժպիտ աւրմակիլու, այսպիսի մի դրօթի մէջ որևիցէ (որ եւ իցէ) պակասութիւն տեսնելիս, իրանց խոհեմ նկատողութիւններով նպաստեն մեզ։ Ո՛չ ապաքէն (չ՚ որ) ամ իրանց սիրելի աշակերտների եւ նոյն իսկ իրանց Ժեռեւութեան համար է յօրինվում»։

Պ Տէր-Ղևոնդեանը սոյն այս պարբերութեամբ ուրանում է լրագրից առաջ քերականութիւն յօրինողներին, մինչ դեռ պատիւառանքով պիտի յիշէը նրանց անուններըը, պիտի ասէը, թէ էլի ումմ և ումմ գրածներից է օգուտ քաղել, որ քերականին է հետևել, և ոչ թէ ասել՝ «մշակուած աղբիւրները չունենալով աչքի առաջ» և այլն։

2.

Քերական՝ կընշանակէ քերականութեան հմուտ մարդ։ Եթէ ով և իցէ այրուբենին քերական է ասել, նա էլ այնքան է հասկացել այդ բառի որոշ նշանակութիւնը, որքան և պ. Տէր-Ղևոնդեանը։ Այբբենարանը մի ձայնագրութիւն է, լեզուի ձայնագրութիւն, իսկ քերականութիւնը մի գիտութիւն է, որ իմաստասիրում է լեզուի օրէնքները և կանոնները։ Այդ գիտութիւնը, այդ փիլիսոփայութիւնը ոչ միայն այբբենարանի հետ միասին չէ պահում իւր ծագումը, այլ շատ ուշ, և աւելի ուշ, քան նոյն իսկ գրականութիւնը։ Ոչնչերը քերականութիւն չունեցած՝ Հոմերոսներ ունէին, հայք քերականութիւն չունեցած՝ գողթան երգիչներ ունէին։ Մինչ այսօր իսկ ամեն ազգ և մենք լինքներս չունինք բանաւոր գրականութիւն, ի՞նչպէս է կազմուել այդ գրականութիւնը առանց քերականութեան, և մինչ առանց քերականութեան կարող չենք այդ բանաւոր գրականութիւնը գրի առնել և նրանից հանել և սովորել քերականութիւն։ Մինչ ձայնագրութիւն սովորելու համար քերականութեան պէտք կայ։ Եթէ մեր անգրագէտ ժողովուրդն աւելի ուղիղ է խօսում, քան թէ քերականութիւն գիտցող գրագէտը, այդ բանի մեղաւորը պէտք է համարել քերականութիւնը, որ ոչ միայն կենդանի լեզուի չափ ուղիղ խօսելու ունակութիւն չի տալիս, այլ և խանգարում է նրա ուղղախօսութիւնը։

Արդեօք մեր նախնիք, որ քերականութիւն են չունեցել կամ թարգմանել, ինչպէս մինչև այսօր անում են և մեր ժամանակակիցները, դրանով օգուտ են տուել մեր լեզուին, թէ վնաս։ Մինչ մի դեռ ևս չուսումնասիրուած, չհետազօտած լեզուին քմահաճոյ կանոններ տալը մի շատ ցանկալի բան է։ Եթէ այսօր Տաճկահատանիք ջոկ և մենք ջոկ սահմանափակենք մեր լեզուն յայտնի կանոններով և մի տեսակ միջնորմ ձգենք այդ երկու լեզուի մէջ, կարող ենք արդեօք դրանց լրիւ մօտենալուն արգելք լինել։ Եթէ կարողանանք, վնաս կըլինինք տուած, թէ օգուտ։ Եթէ չկարողանանք, զուր չըվիաւոր լինինք յօրինած

քերականութիւն, քանի որ չըպիտի կատարուին նրանում յայտնած կանոնները։ Բայց մի րոպէ թողնենք այս ընդհանուր ազգային հայեցակէտը և մանկավարժական, կրթական տեսակէտից նայենք։

Բարձր և բարձրագոյն գպրոցներում մայրենի՝ կամ ասել՝ ազգային լեզուի ուսումնասիրութիւնը մի շատ կարևոր և ցանկալի բան է։ Շատ ցանկալի է, որ մեր բոլոր բարբառներն էլ ուսումնասիրուին և ցոյց տրուին նրանց քերականական յատկութիւնները։ Բայց քերականութեան ուսումն լինչ նպատակ ունի տարրական դպրոցներում. արդեօք օգտակարը է, թէ վնասակար,—ահա այս է կարևորը։ Պարոն Տէր-Պօղոսեանը վճռաբանակ այդ գործի օգտակարութիւնն ու նպատակը չոշափելի վիճաբոյլ ցոյց տալու, ասում է՝ քերական և քերականութիւն մի և նոյն բանն է, և մեզ ամօթ է, որ այդ բանը չհասկանանք և այսուբենի հետ քերականութիւն չըսովորեցնենք։ Ընդհակառակն՝ մեզ համար շատ և շատ ամօթ է այդ երկու իրարից շատ և շատ հեռու առարկաները իրար հետ խառնելը։

3.

Տարրական դպրոցի մեկ և գլխաւոր նպատակը պիտի լինի տալ երեխային լաւ և վարժ կարդալու կարողութիւն։ Մանուկը պէտք է արտասանի իւր կարդացածը, պէտք է անգիր գրի իւր անգիր արածները։ պէտք է գրի առնէ իւր լսած առակներն ու հիքայեթները, պէտք է շատ բաղդի իւր մանկական յիշողութիւնները, և վարժապետը պէտք է շըտկի, ուղղէ այդ գրածները, իրան հիմք ունենալով լաւ կարդալու եղանակը, և ոչ քերականութիւնը։ Անհրաժեշտ գրելու ամենալաւ և դիւրին միջոցը լաւ կարդալն է։ Գրեցէք մի որ և է պարբերութիւն՝ առանց շեշտերի և դէտազրութեան՝ լաւ կարդալ սովորած երեխան ինքը կըզգէ բոլոր շեշտերն ու դէտերը իւր կարդալու եղանակի համեմատ։ Լաւ կարդալը եղանակ ունի, նա մի տեսակ գնացական երգ է։ Ուրաքանչիւր տող, շեշտ և դէտ զանգակի պէս հնչում է երեխայի ականջին։ Թելադրեցէք՝ «Վա՜յ, Կիրակոս, այս լինչ արիր»,—լաւ կարդացող երեխան շատ ուղիղ կըգրէ։ Մանուկները ոչ միայն շատ սիրում են երգելը, այլ և շատ շուտ էլ ըմբռնում և սովորում են ոչ միայն երգի եղանակը այլ և եղանակի ճանաչողութիւնը։ Ով որ կարծում է, թէ անխտիր գրելը քերականութեան և ոչ լաւ կարդալու հեռանք է, և այն ժամանակը, որ պիտի գործ դնէը լաւ կարդալ սովորեցնելու համար, անխտիր և վարժ գրելու համար՝ գործ կըզնէ քերականութեան վրայ, այնպիսի վարժապետը ոչ միայն քերականութիւն չի սովորեցնիլ, այլ և կըզրկէ երեխային լաւ կարդալուց։ Այսպիսով քերականութիւնը տարրական դպրոցում կըզտնայ մի բոլոր մեղուն վնասակար, մի արգելք, մի խոչընդոտ լե-

դուխ բնական և կանոնաւոր զարգացման։ Այն գիրքը, որ երեխան ունի երբեմն ընթերցարան, որով նա կարդալ է սովորում, որ արտաքրում է, որ բերան է անում մէջի եղած լաւ կտորները, բանաստեղծութիւնները, նոյն գիրքը պիտի տայ լաւ կարդալու, լաւ և անսխալ գրելու նիւթ։ Եթէ երեխան կարդում է «Կարմիրը վարդը բացվում է մայիսին», ոչ միայն լաւ հասկանում է, թէ ինչ է կարմիրը, վարդը, բացուիլը, մայիսը, այլ և նրա հոգու մէջ նկարվում է գարնան գեղեցիկ պատկերը, իւր տեսած պարտէզը, վարդի թուփերը կարմիր վարդերով զարդարուած. միտն է բերում իւր վարդ քաղելը և այն բոլոր դէպքերը, որ այդ դէպքի հետ կապ են ունեցել, թէ ինչպէս հոտոտեցին, ինչպէս կըլեցին երար ձեռքից, ում տուին, ումնից ստացան։ Եթէ ուզենանք հարց ու փորձ անել այս մասին, երեխայոց պատմութիւնները վերջ չի լինիլ, ուստի և պէտք չէ շատ ծանրացնել և ժամանակ կորցնել, բայց այդ նախադասութիւնը թելադրելիս կամ կարդացնելիս, կարելի է օգուտ քաղել «վարդ» բառից և մանուկներին ասել և սովորեցնել, որ «վարդ» գրվում է դ-ով, բայց կարդացվում է «վարթ». թէ՝ կան մի քանի բառեր, որոնց մէջ դ-ն հնչվում է թ-ի նման, ինչպէս՝ գրում ենք մարդ, բայց կարդում՝ մարթ. ասում ենք՝ զարթի, և գրում զարդ, զարդարանք, զարդարել, զարդարած. ասում ենք՝ կարթա, կարթալ, կարթաց, բայց գրում ենք՝ կարգա, կարգալ, կարգաց, ինչպէս որ ասում և կարդում ենք եթադայը, բայց գրում ենք եղբայրը, ասում ենք ախպերը, և գրում ախպերը... Այսպիսի դէպքերում պէտք է ի նկատի ունենալ և տեղական բարբառը, տեղական արտասանութիւնը այս ու այն տառի։ Վրացահայ մանուկը չի ասիլ վարթի, այլ վարդ, որովհետև վրացիք ասում են վարդի և ոչ վարթի։ Եթէ տեղեր կան, որ վարթի ասելու տեղ՝ ասում են վարդ, թէև այդպէս էլ ասեն, այդ տեղի ուղիղ է և ոչ սխալ, մանաւանդ թէ տեղի կտգնէ ուղղագրութեանը, բայց ուր որ այդպէս չեն հնչում, նրանց էլ չըպէտք է հարկադրել, որ վարդ ասեն և ոչ վարթի, որ բուն հայ լեզուի արտասանութեան կանոններին ընդդէմ չէ և ունի իւր քերականական օրէնքը, որ ծագում է բ գրի առանձնայատկութիւնից։

Այսպէս ահա մերժելով քերականութեան մուտքը տարրական դպրոցում, մենք չենք մերժում ուղղագրութիւն սովորեցնելու անհրաժեշտութիւնը, բայց այդ ուղղագրութիւնը պէտք է սովորեցնել ընթերցանութեան դասագրքի վրայ, և ոչ թէ մի առանձին գրքի, որ ոչ մի կապ չունի ընթերցանութեան գրքի հետ և երբէք նրա հարստատ եղբայրը լինել կարող չէ։ Այլ է սովորեցնել ուղղագրութիւն և այլ սովորեցնել՝ թէ կարմիրն ածական է, վարդը գոյական, բացուիլը գործողութիւն է, մայիսին՝ ժամանակ ցոյց տուող, մինչ դեռ կարմիրն ածական լինելուց առաջ դեռ պէտք է լինի մի որոշ գոյն, վարդը մի ծա-

դիպ, բացուելը մի աճելութիւն, մայիսը մի յայտնի ամիս, և մինչեւ սրանք պակաս նշանակութիւն ունին քան գոյականն ու ածականը, որոնք մնում են երեխայի համար անհասկանալի և անըմբռնելի։

Մեր տարրական դպրոցներին և մեր լեզուին մեծ ծառայութիւն արած կըլինի նա, ով որ ամեն նախապաշարմունքներից ազատ, գրական յարչութիւնից հեռու, ուղղագրութիւն սովորեցնելու մի ձեռնարկ կըյօրինէ, և այն վարժապետաց համար և ոչ աշակերտների։ Ինքը պ. Տէր-Ղևոնդեանը ուզեցել է այսպիսի մի ծառայութիւն անել իւր քերականութեան երկրորդ գլխովը, բայց չի իմացել դոփոխ կատարելու կերպը և կոտրել է անտառի բոլոր ճիւղերը։ Ցոյց տալու համար, որ Աղէքսանդր Մակեդոնացին հերոս է, կոտրատել է տարրական դպրոցի բոլոր նատարանները։ Այսպէս՝ ուզենալով օ գրի ուղղագրութիւնը սովորեցնել, ամեն մի օ-ով գրուած բառի համար մի նախադասութիւն է շինել, և վերջումն աւելացրել. «Աշխարհաբար լեզուի մէջ այդ խօսքերից գոա՝ օ-ով գրուող բառերը հազիւ թէ պատահին։ Մնացած բոլոր բառերը ո-ով են գրվում»... Մի և նոյն է ասել և է գրի համար և վերջումն աւելացրել. «Աշխարհաբար լեզուի մէջ ուրիշ է-ով գրուող բառերը հազիւ թէ պատահին»։ Այսպիսի այդ անհիւ օրինակներից մի քանիսը, որից մեր վարժապետները կարող են մի հաշակ տանալ մ. Տէր-Ղևոնդեանի հաշակի և հասկացողութեան մասին։

«Սալամ Թոչունին տուէմ են ասում, շորի ծայրի կորուածքին—տրէզ, խեղճ, Թշուառ մարդուն—փէք։ Էրէան պարէն (՞) էր վաճառում։ Ուղտի կռնակի աւելամիսը կուտակն է կոչվում։ Դեղծի ծառին կուէզ կար։ Ջուխակի սանրի ըռնելիքը րէջ է կոչվում։ Թէպէտ Թէատրոն չեմ դնում, բայց այնտեղ պատահածները հակառիտ եմ լըսելու։ Ոծիր դպրոն նանապարհորդներ Թեղուշի Թօշնած տերեւների հովանին արհամարհելով՝ Թօռափելուին իրանց յոգնածութիւնը, Թողը, տօնը եւ իրանց զօրեղ ոռներին ուժ տալով՝ առաջ գնացին։ Անօրէն պարսիկը՝ ամօթը կորցրած, խլեց մեր կովը՝ պրօտիս բերած. մայրս աչքերից արտօսր Թափելով՝ տան անօթները վաճառեց Շուտով զօշապաղ պարսիկի պարտքը վճարեց, կովը յետ բերեց։ Առիւծը որջի մէջ կօշում էր, յետոյ նա իւր ճօր ծայնով մռնչաց ու ճօտն ու հօրանը, եղն ու հօտաղը ստրատի մէջ ընկան...»

Եւ այլ այսպիսի բազմաթիւ օրինակներ, մինչև բոլոր ուղիղ թէ սխալ եղած օ և է գրերով բառերը հատանեն։ Աւելի եմ ուղիղ և սխալ, որովհետև այնպիսի բառերը է օ-ով գրել, որ ո-ով են գրվում, ինչպէս Թոշոռել, լոշ, շոշոափ, Թոշակ, ծուղակ և ոչ, ծօղակ, չէզոք և ոչ չէզօք, և այլն... Բայց այդ սխալները չեն բանը, գարհուրելին այն է, որ իւր բերած օրինակների բառերը մեծ մասամբ այնպիսի բառեր են, որ ինքն իսկ իւր կեանքումն առաջին անգամն է կարդացել և գրել, և անշուշտ արդէն մտքից գցած պիտի լինի, ինչպիսիք են տուռէֆ, տրէզ, կըռէզ, վէք, և այլ այսպիսի չլսած բառերը, Կարելի տալին մի անգամ

պատահող, և այն էլ ոչ բոլորը միասին։ Ասել պէտք է ուրեմն, որ ոչ մի բարեխիղճ վարժապետ այսպիսի անխիղճ բան չի յօրինիլ, և այն էլ նոր արդէն ուսումնարան մտած երեխայոց համար։

Ի վերջոյ մեր կողմից ուղղագրութեան մի պատ։

Պարոնը գրել է նոր ուղղագրութեան գլխի սկզբում—

Հնձած ցորենը կալում են կալերում։
Ցորենը կալում են կամներով։ (երես 29)

Սխալը երկու տեսակ է լինում, անգիտութեամբ և յմաստակութեամբ։ Անգիտութեամբ արած սխալը յայտնի է, իսկ յմաստակութեամբ արած սխալն այն է, որ մէկը ուղիղը սխալ կըհամարէ և խելքին զօր տալով՝ ուրիշ կերպ կըգրէ։ Մեր ոչ մի բարբառում կալսել բառ չըկայ, այլ՝ կասել, իսկ գրաբարում՝ կասել և կասուլ։ Արդ՝ կասելն ինչպէս է կալսել դառել։ Երևի պարոնը կարծել է, որ կասել բառը նոր ծագումը «կալ» բառից պիտի առած լինի, ուրեմն և պէտք է լինի կալսել և ոչ կասել։ Մենք ունինք կալ, կամն և կասել։ Եթէ կասելուն պիտի կալսել ասենք, ուրեմն կամնին էլ պիտի ասենք կալմն, և վոխանակ ասելու կամնել, որ կասել կընշանակէ, պիտի ասենք կալմնել, որ կալսել նշանակէ։ Գրողը պատահական չէ հնագէտ լինել, այլ պէտք է գրէ այնպէս, ինչպէս գրել են նոր նախնիքը, աւելի հեղինակաւոր մարգիկ, ինչպէս որ գտել են բառարան չինողները, և ոչ ոք իրաւունք չունի այդ սրբացած, և ուղղագրած բառերը նոր ուղղագրութեան ենթարկել և այն էլ իմաստակութեամբ, առանց հասկանալու, թէ որը որից է։

Երկրորդ օրինակ—

«Պայ-պայ, կանչեց Ռուբէնը, էդ ինչպէս ես փայ անում հացը»։ (երես 42)

Այս նախադասութեան մէջ վոխանակ պայ բառի վրայ մի բացագանչական նշան դնելու, դրա վոխանակ մի ծանօթութիւն է դնում, թէ՝ «պայ»—երկիւղից յառաջացած բացագանչութիւն է։ Պայ «նշանակում է գերբակաև արարած—ինս ու ջինս»...

Մեր ժողովուրդը գոռ է ածում «պա-պա-պա-պա» բացագանչութիւնը բոլորովին այնպէս, ինչպէս որ մեր պատանիները՝ եակէքը թափ տալով՝ բացագանչում են՝ տա-տա-տա-տա, ուրեմն պէտք է ենթադրել, որ տատան էս մի այլ գերբնական արարած է։ Հապա ինչ ասենք այնուհետև զարթաղոց ընթրցին. երևի այդ ընթրն էլ մի ահագին դէվ պիտի լինի, որի մի պուշը երկինքը լինի սրբելիս և միսը գետինքը։

Երրորդ օրինակ.

«Յատուկ անուններին վերջում, գործողութիւնը հրամայական ձևով գրուելիս և սա, դա, նա, ահա, քո, այն բառերի վերջում յ տառը չի դրվում, այլ միասին է։ (երես 43).

Այստեղ չի բացատրում պատճառը, թէ ինչու չի դրվում, այլ մի ծա-

նօթուԹիւն է դնում, Թէ ենդուը է ասում վերանում է, որովհետև յատուկ անուններին վերջում յ դնելը սխալ չէ, ըստ որում սեռականի մէջ այդ վերացած յ-ն կրկին մէջ է գալիս, ինչպէս Աննա, Աննայի»:

Ի՞նչ վերաբերուԹիւն ունին յատուկ անունները դերանուններին և մակբայներին հետ: Մեր լեզուի կանոնով մի ամբողջ բառերը, եԹէ բայ չեն, ինչպէս են՝ գայ, լայ, տայ, կայ, այլ ուրիշ մասն բանի, եԹէ վերջումը յ առնեն, այդ յ-ն չի մնալ համր, այլ կրկարդացուի, ինչպէս հայ, վայ, վայ, չայ, հոյ, խոյ, սոյ, նոյ. ուստի եԹէ գրենք սայ, կրաւունք չունինք կարդալու սա, այլ ca՛ï: Մեր լեզուի մէջ բուն հայերէն չբարդուած բազմաւանկ բառ չկայ aï, yï, Ëï, oï, վերջաւորուԹեամբ, եղածներն օտար բառեր են: Օտար բառերը՝ յատուկ լինին Թէ հասարակ, պէտք է համր յ չառնեն վերջից, այլ ձայնաւոր, ինչպէս՝ Աբրահայ, Դաւնայ, Դանայ, Հիմալայ. այս պատճառով ահա լաւ գրողները ոչ օտար և ոչ ազգային անհոմոնիա բառերի վերջում համր յ չեն դնում. ինչպէս՝ Հիմա, ահա, տալա, հապա, աչիւարա, սա, գա, նա, սորա, դորա, նորա, գաԹա, խաԹա, բալա, ուստա, մաշա, վաշա, բոշա: Մեր լեզուի մէջ ա վերջաւորուող գոյական անուն ևս շատ քիչ կայ, ընդամենը հազիւ ԹէԹ տասը լինին. իմ մնաս եկողներն են – տղայ, երեխայ, արքայ, Հսկայ, ընծայ, քահանայ, սպայ, (պէտք է լինի սպահ, սեպուհ), սատանայ (ՀնուԹեամբ հայացած):

Այս տեսակ օրինակները ս. Տէր-Ղևոնդեանի սխալներից շատ կարող էի բերել, բայց ինչ օր բերի, այս էլ շատ է: Այսպէս՝ տարբրական քերականուԹեան մէջ մեկ կարևոր մասը ուղագրուԹիւնն է, բայց այն էլ խճողուած է բոլբոնած և սխալ բառերով և անիմաստ ու սխալ բացատրուԹիւններով...

Ով ունեցի՝ տայի: Ով որ կարդալու կարողուԹիւն է ձեռք բերել, ընդ նմին և կարդացածը հասկանալու չնորհք, այնպիսին շատ կրկարդայ: Ձեռք բերած ոյժը գործադրուԹիւն կրպահանջէ: Ուստի մէջ ԹոյլԹ և տկար է կարդալու կարողուԹիւնը, այնպիսին կրխորշի կարդալուց: Ամենից առաջ ուրեմն պէտք է երեխային մէջ զօրացնել, ուժովացնել կարդալու կարողուԹիւնը, որպէս զի նա գործադրէ այդ ուժը անկախ և ինքնուրոյն կերպով: Պէտք է շահագնել երեխային, պէտք է զօրացնել նրա ԹևԹերը, որ նա ԹռչԹել կարողանայ: Այս ոյժը, այս չնորհքը երեխային տալ կարող չէ այն վարժապետը, որ մանուկներին օրերով գրաղեցնում է քերականուԹեան կանոններով:

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

Պ Ա Ր Ո Ն Գ. Ե-Ի Ն

Կարդացի Ձեր գրուածքը «Սրճագանք» շաբաթաթերթի 45-դ համարի մէջ։ Եթէ քննադատողը նոյնքան քննադատած ամէն մի գրքի հեղինակի կամ նրա պաշտպանների և երկրպագուների հետ սկսէ բանակռուել, նա էլ ժամանակ չի ունենալ նոյնը սկսած աւելի օգտակար գործը շարունակելու։ Դուք կարդացած կը լինէք «Բրուտի չունը» Սրճագանքի մէջ, գուցէ և Հ. Տէրվիշեանի պատասխանը, որ իմ քննադատութեան մէջ անկրօնութիւն է տեսնում. իսկ դուք էլ կրօնականութիւն էք տեսնում և անարժան ու յանդուգն էք համարում։ Այսպէս է մեր մէջ քննադատողի վիճակը, թէև այդ քննադատողը՝ ձեր ասելով՝ մի դիւզ մարդ լինի և դիւզ խօսող։ Ես ասել եմ, որ բանաստեղծը իւր ժողովրդի և ժամանակի ծնունդն է։ Իմ այս ասածը մի բացարձակ և յաւիտենական ճշմարտութիւն է։ Սորա մէջ են ամփոփուած թէ Հոմերոս, թէ Շեքսպիր, թէ Լուտէր և թէ բոլոր ձեր յիշած մարդիկը։ Բայց որ դուք իմ ասածի մէջ տկլոր րէալիզմ էք գտնում և ոչ չքեղազարդ իդէալիզմ, այդ նրանից է, որ դուք մոռացել էք ձեր մէջը բերել, որ աշխարհիս երեսին առանց իդէալի ժողովուրդ չկայ, և ազգ ազգից, հասարակութիւն հասարակութիւնից և դասակարգ դասակարգից տարբերւում է իւր իդէալով։

Պարոն Յովհաննէսեանի բանաստեղծութիւնների մասին ես ուրիշ ոճով և ուրիշ մտքով եմ գրել, որ դուք չէք ուզեցել հասկանալ և խճճել ու աղաւաղել էք իմ ասածները թէ գիտութեամբ և թէ անգիտութեամբ։ Հայհոյանքը ոչինչ ասելիք չունենալու նշան է, իսկ հակառակորդի ասածների աղաւաղելը — անխղճութեան։ Պարոն Յովհաննէսեանի բանաստեղծութիւնների մասին աւելի ընդարձակ քննադատութիւն ունի ստացած լոմբագրութիւնը պ. Սեդրակ Մանդինեանից և կը տպագրէ յառաջիկայ յունուարի ամսատետրում։ Իսկ Պետերբուրգի հրատարակութիւնների մասին իմ ասելիքս դեռ վերջացած չէ. երբ որ կը տպուի, այնուհետև խելացի մարդիկ կըտեսնեն, թէ որի ասածներն են անարժան և յանդուգն...

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԹՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Ուրբաթ Ս. Սինոդը ի նկատի առնելով մի քանի Թեմակալ առաջնորդների հարցմունքը այն մասին, Թէ կարելի՞ է Թոյլ տալ կաԹոլիկ և բողոքական հիւեղեցական-ծխական դպրոցների առ նրբին հարցարձնուԹեան ենԹարկուլու պիտոյական օրէնքների նշանակած չորրորդ կարգի արուեստուԹիւնից օգտուելու համար, — հրամայեց դիմել է շրջաբերականով Թեմակալ առաջնորդներին, որ առանց կրօնի խորհուրդների, ամէն դասատուԹեան պատկանող հիւեղեցական-ծխական դպրոցների սանները կարող են ենԹարկուել արհեստական արուեստուԹիւնից օգտուելու համար. այդ իրաւունքը արդէն է անխտիր և բացառիկ կոչուած դասատուԹեան պատկանող ուրիշ ժողովրդին:

Մեր բաժանորդներից շատերը ծանուցանելը կամ նրանց բաւական դատակներից՝ մնատանգ այս վերջին տարին՝ յանձնա ոտանում ենք նամակները, որոնց բովանդակուԹիւնը բացատրէս վերաբերում է «Աղբիւր» յօդուածներին նրա յառաջդիմուԹեան և այլն: Այս հանգամանքը մեզ խիստ մխիթարում է — այդ ակնյայտ ապացուցուԹիւնը, որ հետևեալ հատատում է «Աղբիւր» ու նրա ընԹերցողների մէջ՝ պիտի մեծ դատէս հատատ լինի մեր գործի ծաղկման, ուստի այդ մասին պիտի երկարօրէն խօսենք մեր առաջին անգամ:

«Աղբիւրի» 1888 Թ. մի-մի օրինակ նուիրել են տիկին Սօֆիա Մերզոյեան Թիֆլ. հանդէս բարեգործ. ընկ. կաթողիկոսուԹեան, օր. Եւգինէ Խոջամիրեան՝ ԲաԹումի դրատարանին, բժ. Ա. Մելիմանեան՝ Կաղզմանի ուսումնարանի դրատարանին, տ. Ենդիբարեան Գանձակու Նիգերաց. Ուսումնարանին:

Նոր տարուայ համար երեխաներին ընծայելու համար՝ «Աղբիւրի» խմբագրատունը կարելի է ձեռք բերել մատչելի գներով՝ ամենաշքեղ հրատարակած մանկական գրքեր, պատկերներ և այլն:

«Աղբիւրի» 1888 № 1-ը լոյս կը տեսնի Հիշտ յունուարի մէկին: ԽմբագրուԹիւնը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև 3-ը կէսօրից յետոյ և 5-8-ը:

Խոհարհաբար խնդրում ենք «Աղբիւրի» բաժանորդներից հասցէները պարզ և որոշ գրել:

Ս. Էջմիածնի պատրիարքական կաթողիկոս Ք. Տ. Մակար Սրբազնագոյն Հայրապետը հինգակ է առաքել Ռուսաստանի Հայերին վուԹամ օգնական-նուԹեան ձեռք հաւաքել ՋէյԹունցի հրկիզուած տաճարի մէջ արիւնակից հայ եղբայրներին: Աներկբայ ենք որ Սուրբ Հայրապետի հնդակը հզօր արձագանք կըգտնի ամեն Հայի որտում: Նպատակները ընդունում են հոգևոր առաջնորդում:

ԽմբագրուԹեանս հասած մի հետաքրքիր խնդրանք, որ շուտով հոգևոր դպրանոցի հոգաբարձուԹիւնը վերջապէս չըհապաղանալով համաձայն գործելու դրքերում մնալ սահմանուած հրամարականաւ: Շատ և շատ յաւում ենք:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ Պ. ՆԱԽԱՐԱՐԻ

(12 մայիս, № 7289)

Տ. Եկատերինա Սիսոեւա յի Ս. Պետերբուրգում հրատարակուող մանկավարժական ամսագիրը «Րօդնիկը» (Родникъ—Աղբիւր) ինչպէս իր գոյութեան հինգ տարուայ ընթացքում, նոյնպէս և հիմա բոլորովին համապատասխան է խմբագրութեան դծած մանկավարժական նպատակին և ուսուցական ընտանիքի և դպրոցի պահանջներին, ծառայելով ինչպէս առատաբուղխ աղբիւր բարոյակրթական ընթերցանութեան, լրացած կրօնական հոգւով և հայրենասիրութեամբ:

Ուստի, խիստ ցանկալի համարելով կարելին չափ շատ տարածուած տեսնել այդ հրատարակութիւնը մանուկ ուսանողների մէջ, պատիւ ունիմ խնդրել ձեր դերազանցութիւնից ձեզ ենթարկեալ դպրոցական հաստատութիւնների ուշադրութիւնը դարձնել Րօդնիկ ամսագրի վրայ, բաժանորդագրուելու համար քաղաքային, և մինչ-նախարդ դպրոցների ստորին դասարանների համար: Րօդնիկի 12 գրքոյկի գինն է առաքմամբ և պրեմիայով և 12-№ մանկավարժական թերթով 6 րուբլի Հասցէն այս է. С. Петербургъ, Никольская площадь д. № 4: *)

*) Խմբագրատունը այժմ փոխուած է՝ Уголъ Знам. и Баскова пер. д. 11/24.

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԼԱՅՊԻՊ Կ. Գ. Սաղդանէք. շատ դժուարին ընտրութիւն էք արել, սակայն այդ մինոյնը ապուած է եղել «Աղբիւրի» 1883 Թ. №№-ում յարմարի տիկին Ս. Բ, Թարգմանութեամբ: Ընդհատուած էք մի քանի պատճառներով, զուցէ դարձեալ կը յաջողի չարունակել: Ուրիշ նիւթ ընտրեցէք:

ԳԶԼԱՐ Տիկ. Ե. Ա. Չէք քաղաքում մայն գուք էք մեր շահագործը, յուսանք ձեր շնորհիւ այդ բազմահայ քաղաքում կաւելանայ մեր ընթերցողների թիւը:

ԲԱԳՈՒ Յ. Տ—Ն. Յաւում ենք, որ անկարող ենք. երկու ապրի էջ կամենում վեր առնել, աւելի չժան կը լինի: Չի՞ որ մենք էլ վճարում ենք և կազմի համար:

» Ա. Ա. Շնորհակալ ենք:

ՄՈՍԿՈՒԱ Ա. Ծ. Համեստութիւնը է այն հատուածն հիմքը, որի վրայ կանգնողը երբէք չէ կարծանուել երեխահատուածութիւնն է խոսքասրած մէջ կարծանուելու ամենահարիւր միջոցը:

Մ.-ՂԱՐԱՔԻԼԻՍ. Ն. Տ. Ս. Սաղդանէք, շատ շնորհակալ ենք, և գուք էք մայն մեղ վերագրում: Լոյս կը տեսնի չուշ յունուարի մէկին:

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

БОЛЬШАЯ ЕЖЕДНЕВНАЯ ПОЛИТИЧЕСКАЯ, ОБЩЕСТВЕННАЯ И ЛИТЕРАТУРНАЯ ГАЗЕТА

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

(ГОДЪ ДЕВЯТЫЙ).

„Русскій Куреръ“ выходитъ ежедневно въ форматѣ большихъ газетъ по слѣдующей программѣ:

I. Постановленія и распоряженія правительства.—II. обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе «вопросовъ дня».—III. хроника: извѣстія—придворныя, военныя, литературныя, художественныя, театральныя, торговыя и др. Біографія и некрологи.—IV. телеграммы.—V. московскій дневникъ.—VI. мнѣнія русской и иностраной печати по текущимъ вопросамъ.—VII. жизнь россіи: народное образованіе, земство, городское, и крестянское самоуправленіе, промышленность и торговля; корреспонденціи изъ Россіи; извлеченія изъ журналовъ и газетъ.—VIII. иностранныя извѣстія: корреспонденціи изъ-заграницы; извлеченія изъ иностранныхъ газетъ.—IX. литературный отдѣлъ: романы, повѣсти, очерки, разсказы, сцены, стихотворенія.—X. фельетонъ: обзоръ явленій внутренней жизни; литературная лѣтопись: обзоръ журналовъ; историческій листокъ: научная хроника; хроника заграничной жизни; театръ и музыка.—XI Критико-библіографическій отдѣлъ: статьи по разнымъ отраслямъ наукъ, искусствъ и промышленности. XII. судебная хроника: судебные процессы.—XIII. разныя извѣстія: случаи, анекдоты и проч.—XIV. справочный отдѣлъ: свѣдѣнія—биржевыя, желѣзнодорожныя, театральныя и отвѣты редекціи.—X объявленія.

Въ «Русскомъ Курьерѣ» помѣщаются ежедневно, не исключая дней послѣпраздничныхъ и табельныхъ: политичсское обозрѣніе, разнообразные фельетоны и передовыя статьи по текущимъ вопросамъ и особѣенное вниманіе обращается на славянскій вопросъ.

Телеграммы помѣщаются «Сѣвернаго Телеграфнаго Агенства» и отъ собственныхъ кореспондентовъ.

Съ 1887 года размѣръ газеты значительно увеличился и прибавилось 650 строкъ. Всего помѣщаются текста, кромѣ объявленій, до 3,000 строкъ.

Редакція, контора изданія и типографія помѣщаются въ собственнемъ домѣ Н. П. Ланина въ Москвѣ.

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою въ Москвѣ:	Съ перес. во всѣ города.	Заграницу:
На годъ. . . 9 р.—к.	На годъ. . . 10 р.—к.	На годъ. . . 20 р.—
« 6 мѣс. . . 6 »—к.	« 6 мѣс. . 6 » — »	« 6 мѣс. . 12 » —
« 3 » . . 2 » 75 »	« 3 » . . 3 » — »	« 3 » . . 6 » —
« 1 » . . 1 » 10 »	« 1 » . . 1 » 25 »	« 1 » . . 2 » 50

ТАРИФЪ НА ОБЪЯВЛЕНІЯ:

За строку петита или за мѣсто, занимкамое ею: на первой страницѣ 20 коп. за стр. На четвертой страницѣ 10 коп. за стр.

Редакторъ-издатель Н. П. Ланинъ.

„РАЗВЛЕЧЕНІЕ“

Художественный, литературный и юмористическій журналъ

Еженедѣльное изданіе съ художественными картинами и множествомъ юмористическихъ рисунковъ и каррикатуръ въ краскахъ.

(ИЗДАНІЯ ГОДЪ ТРИДЦАТЫЙ).

Подписная цѣна: на годъ 6 р., на полгода 4 р., на 3 мѣсяца 2 р., на 1 мѣсяцъ 75 к. съ пересылкой и доставкой.

Въ теченіи года 50 №№, которые составятъ громадный томъ очень большаго формата, заключающій въ себѣ болѣе 200 каррикатуръ, около 100 художественныхъ рисунковъ, множество мелкихъ разсказовъ, очерковъ, сценокъ, стихотвореній, шутокъ, мелочей, каламбуровъ. остротъ, анекдотовъ, подписей.

25 серьезныхъ повѣстей или разсказовъ съ иллюстраціями и не менѣе ТРЕХЪ романовъ съ рисунками лучшихъ художниковъ.

Въ литературномъ портфелѣ редакціи имѣются для 1888 г. слѣдующіе виды: I. „Черное горе въ стѣнахъ бѣлокаменной“. Большой иллюстрированный историческій романъ А. Пазухина. II. „Роковой ключъ“, романъ князя Модатова, автора романа „Московскіе хищники“. III. „Ночи темныя, осеннія“ поэма А. Будищева. IV. „Развеселое житье“, повѣсть Хромова. V. „Иногородніе покупатели“, романъ А. Чистопольева.

Въ каждомъ номерѣ мы будемъ давать,—помимо главнаго романа, небольшаго разсказа, стихотворенія, мелочей и рисунковъ въ краскахъ,—фельетонъ общественной жизни и стихотвореніе „послѣднія извѣстія“, затѣмъ постоянно чередуясь, I. По Россіи, фельетонъ провинціальной жизни, II. По театрамъ—отзывы о новыхъ піесахъ и исполнителяхъ, III. „Въ городѣ за чайкомъ“—страничку торговли съ курьезовъ и т. п. IV. „Шутки ради“—альбомъ веселыхъ мелочишекъ, анекдотовъ, юмористическихъ стихотвореній, загатокъ и т. д., V. „Новости“—большой отдѣлъ въ юмористическомъ тонѣ всякихъ новостей въ мірѣ театральномъ, литературномъ, общественномъ, торговомъ и т. д. VI. „Почтовый ящикъ“—отдѣлъ для отвѣта на письма нашихъ корреспондентовъ и обязательно въ каждомъ номерѣ два рисунка въ краскахъ.

Гг. годовые подписчики получатъ въ мартѣ 1888 г. роскошную премію *)

„ПРІЕМЪ ПРИДАНАГО“.

Копію извѣстной картины профессора В. В. Пукирева. исполненую въ 22 краски на веленевой эстампной бумагѣ очень большаго формата (15 вер. вышины). Копія исполнена замѣчательно художественно и можетъ служить украшеніемъ любой гостиной.

Лица, желающіе замѣнить эту премію другою—имѣютъ право на полученіе преміи за 1887 г. большой исторической картины, исполненной въ 23 краски

„КНЯЗЬ ВЯЗЕМСКІЙ У МЕЛЬНИКА“.

Сюжетъ взятъ изъ романа А. Толстаго „Князь Серебряный“. Роскошную картину эту, равную по размѣру первой, подписчики могутъ получить тотчасъ при подпискѣ. Во избѣжаніи задержки, могущей произойти отъ печатанія множества адресовъ, покорнѣйше просятъ господъ читателей озаботиться подпискою зоблаговременно.

Подписка принимаеся въ редакціи: Москва, Газетной пер. домъ Лионозова.

Редакторъ-издатель И. Ѳ. Морозовъ.

---

*) За пересылку преміи на скалкѣ Гг. подписчики прилагаютъ 60 копѣекъ.

(ВЪ 1888 ГОДУ ДЕВЯТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ)

РУССКІЙ НАЧАЛЬНЫЙ УЧИТЕЛЬ

будетъ издаваться по прежней программѣ, при постоянномъ участіи

НАРОДНЫХЪ УЧИТЕЛЕЙ И УЧИТЕЛЬНИЦЪ.

Обязательный объемъ остается прежній: не менѣе 25 листовъ въ годъ (въ предъидущіе годы давалась 40—50 листовъ, т. е. болѣе обязательнаго объема). Лѣтнія книжки выходятъ по двѣ вмѣстѣ.

Въ журналѣ принимаютъ участіе: Береншгамъ, Н. Бунаковъ, Галлеръ, Гербачъ, Дебольскій, Демковъ, Латышевъ, Ив, Мещерскій, Д. Д. Семоновъ, Д. Соловьевъ, Св. Мих. помѣщаются многія работы и письма народныхъ учителей, разборы новыхъ книгъ и различныя сообщенія о ходѣ учебнаго дѣла. Ежегодный конкурсъ на составленіе чтеній для народа.

Подписка принимается въ редакціи (Спб., Англійскій пр., д. 40, кв. 8) и въ магазинѣ Фену и К° (С.-Петербургъ, Новскій, пр. д. 42).

ПОДПИСНАЯ ЦѢНА НА ГОДЪ 3 р. съ пересылкой

Есть экземпляры за прежніе годы, кромѣ 1883 г.

Журналъ **ОДОБРЕНЪ** Ученымъ Комитетомъ Министерства Народнаго Просвѣщенія для народныхъ училищъ, учительскихъ семинарій и институтовъ.

Объявляется шестой конкурсъ на составленіе чтеній для народа. Работы должны быть доставлены не позже 1-го августа 1888 г. Выборъ темы предоставляется сдѣлать самимъ авторамъ. Объемъ чтенія долженъ быть около 1 листа печати. Кромѣ небольшаго вознагражденія за статью, редакція принимаетъ на себя хлопоты объ отдѣльномъ изданіи (второе и послѣдущія изданія, если будутъ нужны, конечно, будутъ составлять собственность авторовъ) принятаго чтенія и передставленіе его на разсмотрѣніе въ Ученый Комит. Мин. Нар. Пр. Напечатоно будетъ одно или два лучшихъ чтеній, разсылаются въ концѣ сентября.

Редакція проситъ Земскія Управы и Училищные Совѣты высылать въ редакцію отчеты по училищному дѣлу.

ПРЕМІЯ ВЫДАЕТСЯ ПРИ ПОДПИСКѢ.

„ШУТЪ“

Большой еженедѣльный иллюстрированный и юмористическій жур.

КАРИКТУРЪ,

Печатаемыхъ красками въ нѣсколько тоновъ

(ХРОМОЛИТОГРАФІЯ)

„Шутъ“ будетъ неизмѣнно выходить, какъ и во всѣ предшествовавшія девять лѣтъ изданія, въ форматѣ большихъ иллюстрированныхъ изданій Художественный отдѣлъ журнала всегда обильно, тщательно и добросовѣстно исполненъ работами нашихъ первыхъ художниковъ-юмористовъ. На выполненіе красками (хромолитографія) рисунковъ обращено особенное вниманіе. *В*ъ теченіе года выпускается не менѣе 325 хромолитографированныхъ рисунковъ и болѣе 300 въ одну краску. По обилію рисунковъ самый полный юмористическій журналъ. Литературный отдѣлъ постоянно составленъ изъ множество очерковъ, разсказовъ, юмористическихъ новостей, стихотвореній, сценъ, монологовъ, анекдотовъ, афоризмовъ, бубенчиковъ, попури и др. Шарады, загадки, задачи и ребусы. Юмористическое обозрѣніе журнала изъ недѣли въ недѣлю будетъ строго выслѣживать бушующую злобу дня столицы и провинціи, повсюду и всесторонне касаясь текущей жизни и интересовъ горячо занимающихъ общество.

Въ теченіе года будетъ печататся портретная галлерея извѣстныхъ личностей.

Для годовыхъ подписчиковъ

БЕЗПЛАТНАЯ ПРЕМІЯ

„ЖЕНЩИНА НА АРЕНѢ ОБЩЕСТВЕННОЙ ДѢЯТЕЛЬНОСТИ“

роскошный альбомъ работы нашихъ извѣстныхъ художниковъ Н. А. Богданова и А. И. Лебедева. Альбомъ отпечатанъ на превосходной эстампной бумагѣ и можетъ служить украшеніемъ самой изящной гостиной.

Въ теченіе года будутъ предложены подписчикамъ

ПРЕМИРОВАННЫЕ РЕБУСЫ.

Условія подписки:

За годъ съ перес. и дост. . . . . 7 руб.
„ Шесть мѣс. съ перес. и дост. . . . . 4 „

Гг. иногородные подписчики благоволятъ къ подписной цѣнѣ 60 коп. для пересылки премій страховою посылкою.

Подписка принимаются въ редакціи журнала «Шутъ» С.-Петербургъ, Невскій просп., д. № 110.

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Декабря 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2

ԵՒՎԱԿԱՆ Ի «ՑՈՂԻԿ», 1888 Թ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՆԴՐԱՆԻԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԻ ԴԱՒԹԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՒԱՔՈՒ,

(Տարէկան մէկ միտինգ 12 հատոր 3—4 տուպրիական թերթ)

ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I) Վէպեր, հատուածներ, պատմուածքներ, հերոսաբանութիւններ, ճամբորդական նկարագրութիւններ։

II) Բանաստեղծութիւններ։

III) Գիտական եւ արուեստական։

IV) Հանրօգուտ տեղեկութիւններ։

V) Այլ եւ այլք։

ՀԱՅԱՍՏԱՆԱԿԱՆ

VI) Ընդհանուր, մի՞ւթեանէն, շրջասոյն եւ այլ լուրեր, բոլոր թուղթերէ, որոնք ունին հետաքրքրական նիւթեր։

ՍՊԱՍԱՒՈՐԱԿԱՆ

VII) Նիւթեր նոտաներով։

ՍՈՒՐԲ ԵԿԱՄԵՑԻԱԿԱՆ

VIII) Կրօնական եւ պատմական տեղեկութիւններ։

IX) Ուրբաթներու եւ տօներու նիւթեր։

X) Ամէն տեսակ տեղեկութիւններ եւ նոր գիրքեր։

XI) Խառն լուրեր։

XII) Պատասխանատուներ։

Տես յետոյ։

ԽՒՄԲԵՐԴ ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՐՁԱԿ ՏԻՐԱԺԱՄ

Հանդէս ամէն մարտ, հունիս, սեպտեմբեր եւ դեկտեմբեր ամիսներուն։

Ամէն տարի հրատարակուած հատորները կը ծախուին 3 ռուբլի արծաթով։

Ամէն մէկ հատորին համար պէտք է առանձին վճարել 1 ռուբլի արծաթ։

Ամէն մէկ տարուան հատորները կը ծախուին 2 ռուբլի արծաթով

«ՄԱՐԴԻԿ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակութիւն Մարդկանոց Հիւանդանոցի Ս. Լազարեան Ազգային Ճեմարանի

1888 թ. «Մարդիկ»

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

1888



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակութիւն Մարդկանոց Հիւանդանոցի Ս. Լազարեան Ազգային Ճեմարանի

1888 թ. «Մարդիկ»

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

1888